անգութ մահը նրան անժամանակ գերեզման չգլորէր:

Զմոռանամ ասել, որ «Թշուառների» մէջ դուրս է բերուած «աղքատիկ խրճիթ», «հողէ կանթեղ», «ցուրտ սենեակ», «անկրակ վառարան», իսկ սա հէնց Դուրեանի բնակարանի հարազատ պատկերն է: Մեծ նմանութիւն կայ եւ գաղափարական էդուարդի ու Դուրեանի միջեւ: Դրանք երկուսն էլ անբախտ սիրոյ, թշուառութեան եւ կեանքի պայմանների ճախորդ դասաւորութեան հէք զոհերն են...

VI

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետրոս Դուրեանի փառքն ու պսակը կազմում են ի հարկէ նրա բանաստեղծութիւնները: Դրանք ընդամէնը 36 հատ են: Սակայն, քանակով այդքան քիչ լինելով հանդերձ՝ նրանք շատ բարձր են որակով: Չլինէին Դուրեանի նամակները եւ թատերգութիւնները, վստահօրէն կարող եմ յայտարարել, որ հայ գրականութիւնը մի առանձին կորուստ չէր ունենայ. իսկ եթէ չլինէին Դուրեանի անզուգական տաղերը՝ մեր գրականութեան մէջ մի խոշոր բաց կը մնար...

Նրա վշտալի տրտունջներն ու հեծեծանքները ցայտում են երբեմն ինչպէս շատրուանի շիթեր, երբեմն էլ բողոքի կերպարանք են ստանում եւ դառնում չանթ ու կայծակ... Դուրեանի բոլոր գրուածքները՝ նամակները, թատերգութիւնները եւ մանաւանդ բանաստեղծութիւնները նրա ապրած ողբերգութեան արտայայտութիւններն են: Բանաստեղծ Դուրեանը տենչում է, ապա իր վառ տենչերն ու ցնորքները դարձնում է սէր եւ խնկարկում: Այդ գաղափարական սէրը մերժուում է, այնուհետեւ նա ապրում է երանաւէտ սիրոյ դառն յիշողութեամբ, յուսախաբուում է, գերեզմանային յուսահատութեամբ համակւում, մերթ ըմբոստանում է կատաղի թափով իրեն վիճակուած սեւ ճակատագրի դէմ, ապա մեղանչում է, զղջում, հանդարտւում եւ համակերպւում մահուան հետ...

Մինչդեռ Պեշիկթաշլեանը, նոյնպէս կեանքից վիրաւորուած, միայն համակերպւում է եւ երգում իր ցաւը, Դուրեանը ե՛ւ երգում է, ե՛ւ հեծեծում, ե՛ւ զանգատւում ու մռնչում թէ՛ անարդար կեանքի եւ թէ՛ Աստուծոյ դէմ: Այդ խիզախութիւնը չունի մեր բանաստեղծներից եւ ո՛չ մէկը:

Դուրեանը ենթակայական երգիչ է, ռոմանտիկ զգրոցին պատկանող, արտայայտելու եղանակն էլ ռոմանտիկ է: Սակայն, իրական են նրա երգած ցաւերն եւ յատուկ ո՛չ թէ միայն իրեն Դուրեանին, այլ առհասարակ բոլոր սիրող եւ տանջուող անհատներին: Ուրեմն Դուրեանի անհատական ապրումները միաժամանակ եւ ընդհանրային ապրումներ են, արտայայտուած գեղարուեստական զարմանալի ճշգունութեամբ: Եւ չմոռանանք ասելու, որ իր տաղանդի դրոշմը կրող բանաստեղծութիւնները նա արտագրել է միայն մի տարում, այսինքն՝ 1871 թուին:

Այդ թուին է գրել նա իր գեղարուեստական գոհարները՝ «Սիրել», «Լճակ», «Թրքուհին», «Ներա հետ», «Դրժել», «Զնէ պաշտեմ», «Սէ՛ր, Սէ՛ր», «Հծծիւնք», «Իմ մահը», «Մնաս բարեաւ», «Ի՞նչ կ'ըսեն», «Իմ ցաւը», «Հայուհին» եւ վերջապէս իր գլուխ գործոց «Ցըրտունջք»ը:

Փորձենք վերլուծման ենթարկել Դուրեանի ապրումները:

Նրա ստեղծագործութեան կորիզն է կազմում սէրը: Նա իդէալականացրել է կին արարածին, կնոջ սէրը եւ աշխարհիս բոլոր գեղեցկութիւնները նրանով է չափում:

Դուրեանը մինչեւ անգամ կնոջ համար հայոց լեզուում յատկապէս նէ անձնական դերանունն է գործածում, չուզելով չփոթել արականի հետ:

Վարդը գարնայնի
Թէ կուսին տիպար
Այտերուն չըլլար՝
Ո՞վ յարգէր զանի:
Թէ չը նըմանէր
Կապոյտն եթերաց
Կուսին աչերաց՝
Երկինք ո՞վ նայէր:
Թէ կոյսը չըլլար
Սիրուն ու ամբիծ,
ԶԱստուածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար:

Այսպիսով ըստ Դուրեանի, վարդը, եթերը, երկինքն ու Աստուած որոշ արժէք են ըս-